ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Թիվ 149

2 դեկտեմբեր 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝
Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Հայկական համայնքի ավագանու 2019թվականի նոյեմբերի 25-ին կայացած թիվ 10 նիստի որոշումները:

Սողիր՝ 11 թերթ

Համայնքի ղեկավար՝ Ռ. Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

25. նոյեմբերի 2019 թ. N 10 նիստի

N 37 որոշում

ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 14 –րդ հոդվածի 6 -րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Հայկավան համայնքի ավագանու թիվ 10 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Հ. Հակոբյան			
Ա. Մանուկյան			
Մ. Ստեփանյան			
Ռ. Ավետիսյան			
Մ. Դավթյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Հայկական
համայնքի ավագանու
2019 թվականի նոյեմբերի 25-ի
N 10 նիստի N 37 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայկական համայնքի ավագանու թիվ 10 նիստի օրակարգը հաստատելու մասին:	Ռ. Ղազարյան համայնքի ղեկավար
2. Գույքահարկի գիջման մասին	Հ. Հակոբյան ավագանու անդամ
3. Հայկականի համայնքապետարանի աշխատակազմի և նրա ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին	Ռ. Ղազարյան համայնքի ղեկավար
4. Հայկական համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին :	Ռ. Ղազարյան համայնքի ղեկավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

25. նոյեմբերի 2019թ

N 10 նիստի

N 38 որոշում

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15 –րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Մանուկ Դավթյանի դիմումը

Որոշում է

1. Հայկավան համայնքի բնակիչ Մանուկ Դավթյանին պատկանող ԿԱԶ 2107մակնիշի ավտոմեքենայի գույքահարկից զիջել 7700 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԿԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Ռ. Ավետիսյան	----------	----------	----------
Մ. Ստեփանյան	----------	----------	----------
Ա. Մանուկյան	----------	----------	----------
Հ. Հակոբյան	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

25 նոյեմբերի. 2019թ. N 10 նիստի
N 39 որոշում

ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ղեկվարի առաջարկը .

Որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի .մարզի Հայկավանի համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԿԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Մ. Դավթյան	.....	.....	.....
Ա. Մանուկյան	.....	.....	.....
Մ. Ստեփանյան	.....	.....	.....
Հ. Հակոբյան	.....	.....	.....
Ռ. Ավետիսյան	.....	.....	.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ
ԹԻՎ 39 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ 13
2. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքա չափը
Համայնքի ղեկավար	1	300.0
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	0
Աշխատակազմ		
Աշխատակազմի քարտուղար	1	129.0
Առաջատար մասնագետ	2	119.5
1-ին կարգի մասնագետ	1	93.6
2-րդ կարգի մասնագետ	1	92.618
Տեխնիկական սպասարկման անձնակազմ		
այգեպան	1	92.618
Պահակ	1	92.618
կոմունալ ծառ. աշխատակից	1	92.618
օժանդակ բանվոր	1	92.618
Աշակույթի տուն		
Աշակույթի տան տնօրեն	1	92.618
տեխնիկ. աշխ.	1	92.618
ԸՆԴԱՄԵՆԸ	13	1409.926

Հայկավան համայնքի ղեկավար՝ Ռ. Ղազարյան

25.11.2019թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

N 10 նիստի
N 40-Ն որոշում

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկավան համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սահմանված կարգով հրապարակման հաջորդող 10 –րդ օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Մ. Դավթյան	.....	.....	.....
Ա. Մանուկյան	.....	.....	.....
Մ. Ստեփանյան	.....	.....	.....
Հ. Հակոբյան	.....	.....	.....
Ռ. Ավետիսյան	.....	.....	.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ

ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ԹԻՎ 40-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յոթ հազար հիգ հարյուր դրամ.

2) սույն կետի .1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. 1000 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի .1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել երկու հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից և ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. Մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում հինգ հազար դրամ

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում վեց հազար հինգ հարյուր դրամ:

գ. 50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տասհազար դրամ:

դ. 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների

2)Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. Մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում հինգ հազար դրամ

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում վեց հազար հինգ հարյուր դրամ:

գ. 50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տաս հազար դրամ:

դ. 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տասներկու հազար հինգ հարյուր դրամ

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

6 Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ երեսունհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ:

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ:

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ:

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ:

4) ծխախոտի արտաքին գովազդի համար՝ երեք հազար դրամ:

5) Սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել մեկ հազար դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հինգ հազար դրամ:

11. Համայնքապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար մեկ հազար դրամ:

12. Համայնքապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայություններ դիմաց վճար սահմանել մեկ հազար դրամ:

13. Հայկավան համայնքի վարչական տարածքի յուրաքանչյուր ընտանիքի համար խմելու ջրի վարձ սահմանել յուրաքանչյուր ամիս մեկ հազար դրամ:

14. Առնտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների աղբահանության սակագին սահմանել 1 քմ- համար 20 դրամ:

15. Հայկավան համայնքի մշտական բնակչության մեկ անձի համար աղբահանության վճար սահմանել ամիսը 100 դրամ(մեկ հարյուր), իսկ հինգ և ավել անձանցից ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների համար սահմանել ամիսը 500դրամ(հինգ հարյուր):

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկավան համայնքի ավագանու «Հայկավան համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերը և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» որոշման նախագծի

վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկավան համայնքի ավագանու «Հայկավան համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերը և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» որոշման նախագծի՝

1/ վերնագրում «տուրքերը» բառն անհրաժեշտ է փոխարինել «տուրքերի» բառով.

2/ նախաբանում «հոդվածի» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «1-ին մասի» բառը, իսկ «որոշում է՝» բառերից առաջ լրացնել «համայնքի ավագանին» բառերը.

3/ Հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետն անհրաժեշտ է խմբագրել և վերաշարադրել՝ համապատասխանեցնելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներին, մասնավորապես՝ «201», «501» և «1001» թվերը համապատասխանաբար փոխարինել «200», «500» և «1000» թվերով.

4/ Հավելվածի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերն անհրաժեշտ է խմբագրել և վերաշարադրել՝ համապատասխանեցնելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջներին, մասնավորապես՝ «51» և «101» թվերը համապատասխանաբար փոխարինել «50» և «100» թվերով:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալություն